ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2020 թվականի N 907-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՄԱՆ ԱՐԱԶԻ ՍՈԼՈՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286-Ն որոշումով հաստատված կարգի 5-րդ գլխի պահանջներով, հիմք ընդունելով Տաշիրի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 20 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք,ք. Տաշիր •հասցեում 4159.6քմ (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0319-0005) գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի արոտավայրը 446117 (չորս հարյուր քառասունվեց հազար հարյուր տասնյոթ) ՀՀ դրամով օտարել 2020 թվականի դեկտեմբերի 28-ին Տաշիրի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի կողմից անցկացված աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված Արման Արազի Սոլոյանին:

2. Արման Արազի Սոլոյանին՝ 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը:

3. Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո Արման Արազի Սոլոյանի հետ երկու օրվա ընթացքում կնքել օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 28
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2020 թվականի N 908-Ա

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, ԹԱՂԱՄԱՍ 6, ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 197/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Պետրոսի Նարգիզյանի (անձնագիր՝ AK 0655821 , տրված՝ 12.11.2010-ին) դիմումը (մուտք՝ 15.12.2020-ի ՄԴ-473-20), անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 14112018-06-0027 վկայականը, «Գուգարաց աշխարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումով հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի բ) ենթակետով, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 6, Երևանյան փողոց, թիվ 197/1 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0117-0033) Աշոտ Պետրոսի Նարգիզյանի կողմից բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,008հա հողամասում ինքնակամ կառուցված 64,85քմ մակերեսով խանութը՝ համաձայն «Գուգարաց աշխարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Հողամասի սահմանները որոշվում են՝ համաձայն «Գուգարաց աշխարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3.Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացնող Աշոտ Պետրոսի Նարգիզյանին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել ինքնակամ կառույցի օրինականացման համար սահմանված վճարը՝ 71335 (յոթանասունմեկ հազար երեք հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ:

4. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 28
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2020 թվականի N 909-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սույն թվականի դեկտեմբերի 29-ին գումարել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 28
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2020 թվականի N 910-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԶՈՅԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ ՌԱՓԱԵԼԻ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Զոյա Մալխասյան Ռափաելի»-ի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N105 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, Խանջյան փողոց, թաղամաս 5, թիվ 3Ա հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Զոյա Մալխասյան Ռափաելի » հայտը բավարարել և նրան տալ 2020 թվականի չորրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 29
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2020 թվականի N 911-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառվարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, « Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի 2021 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման եռամսյակային համամասնությունները՝ համաձայն բյուջեի հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 29
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2020 թվականի N 912-Ա

«ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով, ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N97-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետով, հիմք ընդունելով «ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» փակ բաժնետիրական ընկերության դիմումը՝ ի դեմս տնօրեն Արմեն Ավետիսյանի (մուտք՝ 2020 թվականի նոյենբերի 3-ի ՄԱ 676-20)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագոդարնոյե բնակավայրում անասնապահական համալիրի կառուցման շինարարական թույլտվություն:

2. «ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081207 հաշվեհամարին մուծել 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ շինարարական թույլտվության համար:

3. «ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայքի ղեկավարին ներկայացնել 2-5 ձևի տեղեկանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 29
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2020 թվականի N 913-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՁՄՌԱՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասով, 186-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերով, ելնելով այն հանգամանքից, որ ձմռանամիսներին հնարավոր չէ ապահովել Տաշիր համայնքի մանկապարտեզների բնականոն կենսագործունեությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.2021թվականի հունվարի 1-ից մինչև 2021թվականի ապրիլի 1-ը ժամանակավոր դադարեցնել համար 1 և համար 3 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների աշխատանքային գործունեությունը:

2. Հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատավարձը վճարել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 29
ք.Տաշիր